



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 16 ՓԵՏՐՈՒՐ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐՎԱՆ

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից, մարդասիրութեամբը քո խրնայեա յանձինրս մեր. ստեղծիչ կենդանեաց եւ Հանգուցիչ նրնջեցելոց:

ԱՂՈԹՔ

Տէր Աստուած մեր, Դուն որ Թագաւոր եւ փառքով եւ զօրութեամբ, ու կը թագաւորես ժողովուրդներու վրայ, երկիւղածութեամբ կը խոնարհիինք Քու դիմացդ: Դուն որ Սո՛րբ ես, եւ կը սիրես արդարութիւնը, հաստատե՛ մեր սրտերուն մէջ ճշմարտութիւնն ու իրաւունքը: Սորվե-ցո՛ւր մեզի Քեզ երկրպագել մաքուր սրտով եւ խոնարհ հոգիով: Ինչպէս Մովսէսը, Ահարոնն ու Սամուէլը Քեզ կանչեցին եւ Դուն պարասխանե-ցիր, այնպէս ալ լսե՛ մեր ձայնը այսօր: Ներե՛ մեր մեղքերը, ուղղե՛ մեր ճամբաները, եւ առաջնորդե՛ մեզ Քու ճշմարտութեամբդ: Տէր, բար-ձրացնենք Քեզ մեր կեանքին մէջ, խոնարհիինք Քու սուրբ լերանդ առջեւ, եւ խոստովանինք՝ թէ Դուն միայն Սուրբ ես: Որովհետեւ Սուրբ է Տերը՝ մեր Աստուածը, այժմէն մինչեւ յաւիտեանս. ամէն:

ՇԱՐՎԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար Վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել գնեց ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան գՏեր աղաչես-ցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐՎԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յանել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՍԱՂՄՈՍ 99

ՏԵՐՐԸ՝ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԹԱԳԱԽՈՐԸ

Տէրը կը թագաւորէ - թող ժողովուրդները դողան.
Բերովբէներով շրջապատուած իր աթոռին բազմած է ան -
թող աշխարհը սասանի:

Մեծ է Տէրը Սիոնի մէջ, ան՝ որ կը տիրէ բոլոր ժողովուրդներուն
վրայ:

Ամէնքն ալ պիտի գոհաբանեն անոր մեծ եւ ահաւոր անունը. սուրբ
է անիկա:

Զօրաւոր է թագաւոր մը՝ որ կը սիրէ իրաւունքը.

եւ դուն ուղղամտութեան կանոն հաստատեցիր, Տէր,
իրաւունք եւ արդարութիւն հաստատեցիր քու ժողովուրդիդ մէջ:

Փառաբանեցէ՛ք Տէրը, մեր Աստուածը,

երկրպագեցէ՛ք անոր գահին առջեւ, սուրբ է անիկա:

Մովսէս եւ Ահարոն անոր մտերիմներն էին, եւ Սամուէլ՝ անդադար
աղօթող մը.

աղօթեցին Տիրոջ, եւ պատասխան տուաւ անոնց:

Ամպի սիւնին մէջէն խօսեցաւ իր ժողովուրդին,

եւ անոնք հնազանդեցան անոր պատուիրաններուն եւ իր տուած
կանոններուն:

Տէր, մեր Աստուածը, դուն միշտ պատասխանեցիր անոնց
խնդրանքներուն,

ներող Աստուած մը եղար անոնց համար,

բայց նաեւ պատիժով հատուցանող՝ անոնց անիրաւ գործերուն:

Փառաբանեցէ՛ք Տէրը, մեր Աստուածը, երկրպագեցէ՛ք անոր՝

իր սուրբ լեռան վրայ, որովհետեւ սուրբ է Տէրը, մեր Աստուածը:

ՕՐՈՒԱՆ ՆԻԲԹԸ



ՍԱՂՄՈՍ 99

ՏԵՐՐԸ՝ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԹԱԳԱԽՈՐԸ

Այսօր դարձեալ, Աստուծոյ օրհնութեամբ եւ օգնականութեամբ պիտի փորձենք սերպել Սաղմոս 99-րդ, որ դարձեալ թագաւորին ուղղուած Սաղմոս մըն է: Անցեալ անգամ ըսի, որ սաղմոսները կարդալ նախ իր ժամանակահատուածին մէջ, այսինքն՝ չմոռնալ պարմական իրավիճակը: Իբրեւ այդպիսին, հետեւաբար, ըստ այնմ նաեւ մեր այսօրուան Սաղմոսը եւս: Այնպէս ինչպէս 97-րդ Սաղմոսը, այս մէկը եւս կը սկսի "Տէրը կը թագաւորէ", ոչ թէ պիտի, այլ արդէն կը թագաւորէ: Չմոռնանք, որ երբ Իսրայէլ դուրս եկաւ Եգիպտոսի ստրկութենէն, եւ քառասուն տարիներու անապարային թափառումներու ընթացքին, անոնք ունէին իրենց հետ Ուխտի Տապանակը, որպէս ներկայութիւնը Աստուծոյ: Ահա այդ երեւոյթը իրենց կը ստրվեցնէր եւ կ'ապահովեցնէր, թէ Տէրը Ինքն է զիրենք առաջնորդողը, Տէրը Ինքն է իրենց թագաւորը: Անով ցոյց

տալու, որ Եգիպտոսի ասպրումները ոչնչություն են: Բայց, ցաօք, այս երեւոյթին հակառակ, անոնք ուզեցին թա-գաւոր մը ունենալ իրենց համար, այնպէս ինչպէս իրենց շուրջ գտնուող ժողովուրդները ունէին: Այս ար-տայայտութեամբ, Տէրը ըսաւ Սամուէլին, զիս է որ կը մերժեն իբրեւ թագաւոր: Իսկ այս Սաղմոսը կու գայ անգամ մը եւս ըսելու թէ Տէրն է մեր թագաւորը: Ուստի, ժողովուրդները թող որ դողան, աշխարհը սասանի, որովհետեւ պարզ ու սովորական թագաւորի մը մասին չէ խօսքը: Երկրորդ, թագաւոր մը, որ քերովբէներով շրջապատուած իր աթոռին բազմած է: Քերովբէներու ներկայութիւնը ամենագիտութեան խորհրդանիշն է: Այս արտայայտութիւն նաեւ կը յիշեցնէ Ուխտի Տապանակի պատկերը, նաեւ Եզեկիէլի մարգարէութեան տեսիլքը: Առաւել եւս, Եսայի մարգարէի տեսիլքը: Նոյնը Յայտնութիւն Յովհաննու գիրքին մէջ: Հերա-քրքրական արտայայտութիւն մը կայ այս Սաղմոսին մէջ, ուր երեք անգամ կը նշուի Աստուծոյ սրբութիւնը, որ կը խորհրդանշէ Ս. Երրորդութիւնը: Կը յիշեցնէ, որ ամէնքն ալ պիտի գոհաբանեն անոր մեծ եւ ահաւոր անունը. նոյն արտայայտութիւնը որ Պօղոս Առաքեալ կ'ըսէ. "Բոլորը պիտի ծունկի գան անոր անունին": Տէրը նաեւ իրաւունք եւ արդարութիւն հաստատեց իր ժողովուրդին մէջ որպէսզի ժողովուրդն ալ ըստ այնմ իրաւունք եւ արդարութիւն ընէ, բայց այդպէս չեղաւ ու այդպէս չէ, երբ կը դիպենք այսօր մարդկութեան վիճակը: Երկրորդ անգամ ըլլալով կ'ըսէ. "Փառաբանեցէք Տէրը, սուրբ է անիկա: Հերաքրքրականօրն երեք անձեր կը յիշատակէ, Մովսէս, Ահարոնն ու Սամուէլ մարգարէն: որոնք աղօթեցին Աստուծոյ, Աստուած ալ լսեց անոնց աղօթքն ու պատասխանեց, բայց նաեւ անոնց անիրաւ գործերուն համար պատժեց: Այստեղ Աստուծոյ պատիժը առնելու որպէս դաստիարակչական, անդրադարձի, մաքրութեան, կարարելութեան հասցնելու: Եւ այդ պատիժը ողորմութեամբ ցուցաբերեց եւ ոչ բարկութեամբ: Երրորդ անգամ ըլլալով, փառաբանեցէք Տէրը, որովհետեւ սուրբ է անիկա: Եկէք մենք ալ այսօր, հակառակ մեր անօրէնութեան, յանցանքներուն, խոստովանինք Տիրոջ, մանաւանդ՝ Մեծ Պահքի առաջին օրուան այս առիթով, խնդրենք Իրմէ ներում, Իր ողորմութեամբ ներէ մեզ, ու երբ պիտի յանդիմանէ, Իր ողորմութեամբ թող յանդիմանէ: Եւ ոգեղէն էակներուն հետ միասին փառաբանենք Տէրը, երգելով, "Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, լի են երկինք եւ երկիր փառօք Քո":